

ՎԻԿՏՈՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅ ԿԱՆԱՅՔ

Միջնադարի հայ կանայք: Նրանք ամենուր են և ամենազոր: Նրանք շինարար են ու հայրենիքի զինվոր: Նրանք վանքեր, բերդեր, կամուրջներ են կառուցել, ձեռագրեր են արտագրել ու պատվիրել: Նրանք զենքը ձեռքերին կռվել են հայրենիքի, իրենց հող ու ջրի համար:

Նրանց՝ Հայոց աշխարհի փափկասուն տիկնանց մասին շատ է գրվել ու դեռ կգրվի: Այս շարքը մի փոքրիկ ծաղկեփունջ է նրանց հիշատակին:

Թ դար

ՄԱՐԻԱՄ

Մարիամը Բագրատունյաց թագավորության հիմնադիր Աշոտ Ա-ի և Խոսրովանույշ թագուհու դուստրն է, Սմբատ Ա թագավորի և Շապուհ սպարապետի քույրը: Աշոտ Ա-ն Սյունիքի իշխաններին իր շուրջը համախմբելու և դաշինք հաստատելու նպատակով Մարիամին ամուսնացրեց Գեղարքունիքում իշխող Սյունյաց Վասակ Գաբուռ իշխանի հետ[1]:

Ամուսնու վաղաժամ մահվանից հետո Մարիամը ժառանգեց Գեղարքունյաց իշխանությունը: Նա շինարարական մեծ աշխատանքներ է կատարել: Մաշտոց Եղվարդցու (հետագայում Մաշտոց Բ կաթողիկոս) նախաձեռնությամբ՝ 871—874 թվականներին Մարիամ իշխանուհին կառուցել է Սևանի վանական համալիրը՝ ս. Առաքելոց և ս. Աստվածածին եկեղեցիները, բնակարաններ հոգևորականության համար: Նա վանքը զարդարել է «մեծամեծ սպասուք», որոշել է վանքի տիրույթները:

874 թվականին այցի գալով դստեր կառուցած վանքը Աշոտ Բագրատունի իշխանաց իշխանը վանքին իբրև ժառանգություն ընծայել է Վարսեր, Ցամաքաբերդ, Գոմաձոր, Բերդք, Ուդյաց տափ գյուղերը, լճի ձկնորսության իրավունքը, այգիներ Գառնիում և Երևանում[2]:

866—877 թվականներին Մարիամ իշխանուհին կառուցել է Ծողագա վանքը: Նա արաբներից գնել ու վանքին է նվիրել Ծողագա գյուղը, որը խոշոր ձկնորսարան էր Սևանի ափին: Ծողագա գյուղը գնելու համար Մարիամը արաբներին է վճարել վեց հազար դրամ: Վանքի համար երեք հազար դրամով նա մեկ այլ գյուղ էլ գնել է Մազազ գավառում:

903 թվականին Մարտունու շրջանի Արծվանիստ գյուղի մոտ Մարիամ իշխանուհու եղբայրը՝ սպարապետ Շապուհ Բագրատունին, «վերակացու եւ տեսուչ առնելով զքոյր իմ Մարիամ, Սիւնեաց տիկին» կառուցել է Վանեվանի վանքը[3]:

Մարիամի և եղբոր՝ Սմբատ Ա թագավորի հրամանով հայերեն է թարգմանվել Նանա Ասորու «Մեկնութիւն սրբոյն Աւետարանին Յովհաննու» գործը: Հիշատակագիրը հաղորդում է. «Եւ յետ այսորիկ այսպէս եղեւոյ, հասեալ լինի գանձ գրոյս

[1] Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 126 և հետո;

[2] Նույնը, էջ 127:

[3] Դիվան հայ վիմագրության, պրակ IV, կազմեց Ս. Գ. Բարխուդարյանը, Երևան, 1973, էջ 121—122;

այսորիկ առ Մարեմ Բագրատունի Սիւնեաց տիկին... Իսկ երանուհւոյս Սիւնեաց տիկնոջ փոյթ ի մտի եդեալ՝ վաղվաղակի հրամայեաց, երկիցս անգամ փոխաբերել ի հայկական լեզու...» և հիշատակարանն ավարտում է· «Այլ և Սմբատ Բագրատունի և Մարեմ Սիւնեաց տիկին, որ զգիրս սուրբըս թարգմանել հրամայեցին՝ զնոյն հայցեն, յիշել»[4]:

Ատրպատականի ամիրա Յուսուֆի ասպատակությունների ժամանակ Մարիամ իշխանուհին որդիների՝ Սահակի և Վասակի հետ ապաստանում է Սևանի կղզում, բայց երբ արաբները գալիս-հասնում են Սևան, նրանք գիշերով, նավակներով հեռանում են լճի մյուս ափը և, ինչպես հաղորդում է Ստեփանոս Օրբելյանը[5], հեռանում են Գարդման: Այստեղ էլ, պանդխտության մեջ, մեռնում է շինարար իշխանուհին: Որդիները չեն ցանկանում իրենց մորը թաղել օտար հողում: Նրանք զմռսել են տալիս մահացածի մարմինը, դնում են փայտե դագաղի մեջ և այդպես պահում են մինչև այն պահը, երբ հնարավոր է դառնում վերադառնալ հայրենիք: Եվ երբ արաբները հեռանում են Հայաստանից, Սահակն ու Վասակը «շքեղագոյն պատուով» իրենց մոր մարմինը բերում ու թաղում են նրա կառուցած Շողագա վանքի մոտ:

ՍՈՓԻԱ

Սոփիան՝ Վասպուրականի Դերենիկ իշխանի դուստրը, Գագիկ Ա թագավորի քույրը, ամուսնացել էր Սյունիքի Սմբատ իշխանի հետ:

909 թվականին Ատրպատականի Յուսուֆ ոստիկանը մեծ բանակով մտավ Հայաստան և շարժվեց Սյունիք: Սյունիքի նշանավոր կանայք փակվեցին անառիկ Երնջակ բերդում: Միայն հինգ տարի հետո՝ 914 թվականին Յուսուֆը գրավեց բերդը և գերեց Սմբատ իշխանի մորը՝ Շուշանին, Սոփիային, նրա ծծկեր որդուն և այլ կանանց: Տիկին Շուշանը և նրա թոռը Դվինի բանտում մեռնում են, իսկ Սոփիան աքսորվում է Ատրպատական[6]:

Երկար տառապանքներից հետո Սոփիան ազատվում է գերությունից ու վերադառնում Սյունիք:

936 թվականին Սոփիա իշխանուհին Ազիզբեկովի շրջանի Գնդեվազ գյուղից կես կիլոմետր հեռու, Արփա գետի ձախ ափին կառուցում է Գնդեվանքի վանքը: Սոփիա իշխանուհու շինարարական արձանագրությունը հողմնահարվել է, ամբողջական տեքստը ժամանակին արտագրել է Ստեփանոս պատմիչը[7]:

Ես՝ Սոփիա տիկին՝ կին Սմբատայ աստուածապահ տեառն Սիւնեաց, և դուստր Գրիգոր Դերենիկի, շինեցի զեկեղեցիս ի յիշատակ հոգւոյ իմոյ և յարևշատութիւն իշխանաց իշխանին Սմբատայ և որդեկաց մերոց և զարդարեցի զսա մեծաձախս սպասիւք...:

Սոփիա իշխանուհին Գնդեվանքին է ընծայում իր հիմնադրած Գնդեվազ և Ատչար գյուղերը, Գոլոշտի վայրում գտնվող մրգատու այգիները: Նա միաժամանակ «գնէ զգիւղն Հալու... և տայ ի ժառանգութիւն եկեղեցւոյ...»:

Իր արձանագրության վերջում Սոփիա իշխանուհին հայտնում է, որ Վայոց ձորի բնությունը նման է մատանու, որ ակ չունի, իսկ ինքն ահա՝ կառուցել է Գնդեվանքը և ակ է դրել մատանու վրա.

...մատանի էր անակն Վայոց ձոր, շինեցի զսա և եդի ակն ի վերայ:

ՄԼՔԵ

Մլքե թագուհին Վասպուրականի Գագիկ Ա Արծրունի թագավորի կինն է: Մլքե թագուհին, անշուշտ, մասնակցել է ամուսնու շինարարական ձեռնարկումներին՝ Ոստանի փառահեղ պալատի, Աղթամարի սուրբ Խաչ տաճարի, մոտ երկու կիլոմետր երկարությամբ նավահանգստի և դրա պարիսպների կառուցմանը, բայց նրա անունը կապված է իր Ավետարանի հետ, որը պատմության մեջ մտել է Մլքե թագուհու Ավետարան անունով:

Մլքե թագուհու Ավետարանի գրվելու վայրը, գրչի անունն անհայտ է: Վերջին ուսումնասիրությունների համաձայն այն գրվել և պատկերազարդվել է 851 թվականին և հայերեն առաջին ձեռագիրն է: Ձեռագրում պահպանված յոթ խորանները, համբարձման տեսարանը և չորս ավետարանիչների նկարներն աչքի են ընկնում հանդիսավոր մոնումենտալությամբ և գեղագրական ազատ պատկերաձևերով:

912 թվականին ձեռագիրը պատկանել է Մլքե թագուհուն.

«Ես Մլքէ Աղախին Քրիստոսի եւ Հայոց Թագոհի ՅԿԱ (912) թվականիս ետու

[4] Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901:
[5] Ստեփանոս Սիւնեաց եպիս., նույնը, էջ 138:
[6] Ստեփանոս Սիւնեաց եպիս., նույնը, էջ 140:
[7] Նույնը, էջ 191:

զաւետարանս ի Վարագի ս. Աստուածածինս, զոր իմ ձեռամբս եւ ծախօք եմ շինեալ՝ յօգնականութիւն ինձ եւ արքային իմոյ Գագկայ եւ զաւակաց իւրոց»:

Պետք է հասկանալ, որ Մլքե թագուհու «զոր իմ ձեռամբս և ծախօք եմ շինեալ» բառերը վերաբերում են ձեռագրի կազմին: Բայց հավանական է, որ ավելացվել են նաև մանրանկար էջեր: Հ. Ղ. Ալիշանը քննելով խորաններից մեկը, որի վրա պատկերված են նավարկության տեսարաններ, նավակներ, ծովային ձկներ, կարծում է, որ դա պետք է ավելացված լինի Գագիկ Ա թագավորի իշխանության տարիներին, երբ բավական մեծ աշխատանք կատարվեց Վանա լճի նավարկության զարգացման համար[8]:

Եզակի բախտ է վիճակվել Մլքե թագուհու Ավետարանին: Ավետարանը արաբական արշավանքների ժամանակ գերեվարվել է: 1208 թվականին Անդրեաս քահանան այն գնում և վերադարձնում է Վարագա վանքին. «Ես, Անդրեաս քահանայ թափեցի զսուրբ Աւվետարանս ի յանօրինաց և վերստին ետու զսա Սրբոյ Նշանիս Վարագայ...»:

Տասնչորսերորդ դարի սկզբներին Պարոն Մանիլայի դուստր Ավագ տիկինը նոր կազմ է պատվիրում և Ավետարանը վերադարձնում է Վարագա վանք:

1515-ին Ավետարանը կրկին գերի է ընկնում և Հովհաննես աբեղան այն գնում, նորոգում ու կազմում է: Դարի վերջին քառորդում Ավետարանը Մարտիրոսից անցնում է այլազգիներին: Մի քանի բարեպաշտ հայեր արդեն քանիերորդ անգամ գնում ու Վարագավանք են վերադարձնում այն. «գնեցինք սուրբ Ավետարանս ի հալալ ընչից մերոց ի յայլազգէ և ողարկէցաք ի Վարագ. լսեալ ենք թէ Վարագայ գիրն գերի չի լինիլ...»:

1682 թվականին Մլքե թագուհու Ավետարանը վերջին անգամ դուրս է գալիս Վարագա վանքից: 1830 թվականին այն Կոստանդնուպոլսում է, իսկ երկու տարի անց՝ 1832 թվականի հուլիսի 6-ին, այն վերջնականապես հանգրվանում է Վենետիկի սուրբ Ղազար կղզում Մ՝խիթարյան հայրերի օրրանում:

1902 թվականին նշվեց, իր ժողովրդի ճակատագիրը կիսած, Մլքե թագուհու Ավետարանի հազարամյակը, տպագրվեց Պոտուրյանի «Զարդանկարք Աւետարանի Մլքէ թագուհւոյ» մեծադիր ոսկերիզ ալբոմը[9]:

ԽՈՍՐՈՎԱՆՈՒՇ

Խոսրովանուշը Աշոտ Բագրատունի (Ողորմած) թագավորի (945—977) կինն է:

Աշոտ Ողորմած թագավորն ու Խոսրովանուշ թագուհին 966 թվականին սկսեցին Սանահնի վանքի շինությունը: Կառուցման հոգսը ընկած էր Խոսրովանուշի վրա: Այդ է պատճառը, որ որպես վանքի հիմնադիր հիշատակել են հիմնականում միայն թագուհուն: Սանահնի վանքի կառուցման մասին Սիմեոն կրոնավորը գրել է. «...ի թուականութեանս հայոց ՆԻԱ (972), ի նորաշէն վանքս կոչեցեալ Սանահին հրամանաւ հաւր իմոյ Յովհաննիսի, որ էր վանիցդս շինութիւն ամք Զ(6), զոր շինեաց բարեպաշտ թագուհին Խոսրովանոյշ՝ ամուսինն Աշոտոյ հայոց շահնշահի, որդի Սմբատայ Բագրատունւոյ հայոց թագաւորի...»[10]:

Հայոց թագավորը և թագուհին փարթամացնում են վանքը «զարդարանօք և յոլով (բազմաթիվ) գեղորէիւք և հայրէնեօք՝ սարով և ձորով»: 979 թվականին Սանահնի վանքը դառնում է եպիսկոպոսական աթոռանիստ[11], վանականների թիվը հասնում է 500-ի:

Հաղբատի վանական համալիրի կառուցումը 976 թվականին նույնպես սկսել է Խոսրովանուշ թագուհին:

Խոսրովանուշը արձանագրություններ ունի Տեկորում և Թալինում: Թալինի 959 թվականի արձանագրությունը եղծված է, պահպանվել են միայն մի քանի բառեր և դժվար է ասել թագուհու «որ կարգեցի» բառերին ինչ միտք է հաջորդել: Տեկորի 971 թվականի արձանագրությամբ «Խաւսրևանիշ հայոց թագուհին» որոշել է վանքի հարկի չափը:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

Շահանդուխտը Խաչենի և Ուտիքի իշխան Սահակ Սևադայի դուստրն է, Սյունիքի թագավորության հիմնադիր Սմբատ թագավորի կինը:

---

[8] Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 391:

[9] 1966 թվականին ս. Ղազարում տպագրված «Հայկական մանրանկարչության» Ա հատորի նախաբանում գրված է, որ «Յիշատակարաններու ուշադիր քննութեամբ՝ յարգոյ Հ. Մ. Ճանաշեան կը հաստատէ 826 թվականը, մերձաւոր անցեալի մէջ առաջարկուած Ն. Ադոնցէն, որով ան կներկայանայ ամէնէն հինը մեզի հասած հայ ձեռագիրներուն մէջ»:

[10] «Բոթուկ», ՀՍՍՀ Մատենադարանի ձեռագիր, № 3032, էջ 37—38:

[11] Նույնը, էջ 47:

Ե՛վ ամուսնու հետ, և՛ նրա մահից հետո, Շահանդուխտը Սյունյաց երկրում հովանավորում է մշակույթը:

Ամուսնու կտակի համաձայն, Շահանդուխտ թագուհին Սիսիանի շրջանի Վաղադնի գյուղում կառուցում է սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքը (Որոտնավանք): Վանքի շինարարությունն ավարտվում է 1000 թվականին: Վանքի արևելյան պատուհանի պսակին փորագրված է.

Շինեցաւ հրամանով թագաւորին Սնպատայ ի ձեռն Շահանդխտոյ բարեպաշտ թագուհոյ[12]:

Ստեփանոս Օրբելյանը հաղորդում է, որ Շահանդուխտ թագուհին կառուցում է «և տուն պղծոթից կրաշաղախ վիմօք ի դրան եկեղեցւոյն, և համբարանոցս և գործատունս. և շուրջ պարսպէ զվանքն. և որոշէ նմա անդաստանս ի Վաղանդնոյ. և տայ զԳոմեր ագարակ ի վանսն· պայծառապէս զարդարէ զեկեղեցին զանազան զարդուք»[13]:

Շահանդուխտը բազմաթիվ նվերներով ու գործուն օժանդակությամբ շենացրել է Տաթևի վանքը: Նա իր որդիների՝ Վասակի և Սևադայի հետ 998 թվականին 6000 դրամ և Հաբանդ գավառի Տեղ գյուղը ընծայել է Տաթևի վանքին[14]:

Շահանդուխտ թագուհին մահացել է 1001 թվականին ու թաղվել է իր կառուցած սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքի բակում:

ԺԱ. դար

ՀՐԱՆՈՒՇ

Հրանուշ թագուհին Լոռիի Դավիթ Անհողին թագավորի դուստրն է, Կյուրիկե Բ թագավորի քույրը:

11-րդ դարի 60-ական թվականներին Հրանուշը Սանահնում եկեղեցի և գրատուն է կառուցել:

Գրատունը կառուցվել է վանքի շենքերի խմբի հյուսիս-արևելյան կողմում: Այն երկրի չորս կողմերի ուղղությամբ ճիշտ դրված քառակուսի շենք է: Պատերի կենտրոնից բարձրացող չորս որմնասյուների վրա ընտած է երդիկավոր կոնաձև ծածկը: Ներսի բոլոր պատերի մեջ ձեռագրերի համար խուլ պատուհաններ են արված: Գրատան հարավ-արևելյան անկյանը կից է Գրիգոր Լուսավորչի փոքրիկ տաճարը, որ ներքուստ քառաբսիդ, արտաքուստ գլանաձև, արտաքին չորս խորշերով, դեկորատիվ կամարներով գմբեթավոր եկեղեցի է:

Հրանուշ թագուհին նախ կառուցել է սուրբ Գրիգոր եկեղեցին, որի կառուցումն ավարտել է 1061 թվականին և նրան զուգահեռ կառուցել է գրատունը, որն ավարտել է 1063 թվականին ու սուրբ Գրիգոր եկեղեցու պատին փորագրել է իր շինարարական արձանագրությունը.

Ի ՇԺԲ (1063) թուին հայոց... ի թագաւորութեանն Կիւրիկէի եւ Սմբատայ, ես՝ Հրանուշ թագուհի՝ դուստր Դաւթի արքայի, շինեցի զնշխարատունս (գրատուն) եւ զեկեղեցիս· եւ ետու զնորաշէնս ի Սանահինս վասն իմ մեղաց թողութեանն եւ իմ եղբարցն արնշատութեան...»[15]:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

Շահանդուխտ Բ թագուհին Բաղաց Կապան հարս է եկել տասնմեկերորդ դարի կեսերին:

Այս Շահանդուխտը Սահակ Սևադայի թոռ իշխան Սևադայի աղջիկն է, Սյունիքի Գրիգոր թագավորի կինը:

Գրիգորն ու Շահանդուխտն արու զավակ չունեին, մի դուստր ունեին Կատա անունով: Եվ նրանք որոշեցին, որ Գրիգորին կփոխարինի Շահանդուխտի եղբայրը· «զՍենեքերիմ՝ եղբայր նորին Շահանդխտոյ թագաւորազն մանուկ, յոյժ գեղեցիկ տեսլեամբ և առոյգ հասակաւ՝ հանճարեղ և իմաստուն...»[16]:

1085 թվականին Շահանդուխտը և իր դուստրը՝ Կատան, Վահանավանքում եկեղեցի և բազմապսակ սրահներ են կառուցում:

Ի ՇԼԵ թվականիս ես՝ Շահանդուխտ, դուստր Սեւադայի Աղվանից թագաւորի եւ ամուսին Գրիգոր թագաւորի, որդոյ Աշոտկայ վասն ոչ գոլո մեր ի միասին ժառանգ (ը)ստ մարմնոյ, ես եւ քոյրս իմ Կատայս շինեցաք զս(ուր)բ Ա(ստուա)ծածինս փոխարեն գթոց նորա[17]:

Գրիգորի մահից հետո թագավորությունը անցավ Սենեքերիմին: Շահանդուխտ թագուհին և Կատան «լքին զերկրաւոր փառս աշխարհիս և զհետ երանաւէտ ձայնին Քրիստոսի ընթացան ճգնազգեստ առաքինութեամբ»:

[12] Դիվան հայ վիմագրության, պրակ II, կազմեց Ս. Գ. Բարխուդարյանը, Երևան, 1960, էջ 100:

[13] Ստեփանոս Սիւնեաց եպիս., նույնը, էջ 221:

[14] Նույնը, էջ 213:

[15] Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 187:

[16] Ստեփանոս Սիւնեաց եպիս., նույնը, էջ 233 և հետո:

[17] Դիվան հայ վիմագրության, պ. II, էջ 138:

1086 թվականին Սենեքերիմ թագավորը «իւր ամենայն սահմանօք շուրջանավի, հողով և ջրով և արտավարօք և զամենայն որ ինչ իւրն էր» Արիտ գյուղը ընծայում է Տաթևի վանքին: Շահանդուխտը հաստատում է եղբոր ընծան[18]:

1096 թվականին Գանձակի ամիրայի խարդավանքին զոհ գնաց Սենեքերիմ թագավորը: Եղբոր եղերական սպանությունից հետո մինչև իր մահը՝ 1116 թվականը, Բաղաց թագավորության շինարարական ու բարեգործական գործը տնօրինում է Շահանդուխտը:

Վահանավանքում Շահանդուխտի և Կատահի հիշատակին մի գեղաքանդակ խաչքար է պատրաստված.

Ք(րիստո)ս Ա(ստուա)ծ ողորմեայ ի քո ի միւս անգամ գալըստեան... ...մայր Շահանդխտոյ ... եւ Կատահին[19]:

ԺԲ դար

ԱՅԾԵՄՆԻԿ

1126 թվականին Անիի ամիրա Աբուլ-ստարի որդի Փատլունը օգնություն ստանալով շրջակա ամիրայություններից, մեծ ուժերով պաշարեց վրացական գերիշխանություն ընդունած Անի քաղաքը: Անեցիները տոկունությամբ ու հերոսաբար մարտընչում են թշնամու դեմ: Ատելի թշնամու դեմ կռվում են նաև կանայք: Անիի պաշտպանության ականատես, պատմիչ Սամուել Անեցին առանձնակի սիրով գրում է նրանցից մեկի՝ Այծեմնիկի մասին, որ տղամարդու սիրտ առած «առ ոչինչ համարելով հետերից ստացած վերքերը»[20] քարերով հարվածում էր պարիսպը բարձրացող թշնամու զինվորներին: Մարտական դիրքում, պարսպի վրա Այծեմնիկը զոհվեց՝ հետագա սերունդներին թողնելով հայրենասեր հերոսուհու անուն:

ՌՈՒՍՈՒԳԱՆ

Ռուսուգանը Կյուրիկե Գ թագավորի դուստրն է: Ռուսուգանը քույրերի՝ Մարիամի և Բավրինայի հետ 1181 թվականին մասնակցել է Սանահնի վանքի Ամենափրկչի ժամատան կառուցմանը և իր հիշատակին կանգնեցրել է գավթի կենտրոնական չորս սյուներից հյուսիս-արևմտյանը, որի վրա արձանագրել է.

Ես՝ Ռուսուգան, նոին արքայի (իմա Կյուրիկե Գ-ի) դուստր, քոյր Մարիամայ, կանգնեցի զսիւն՝ լինել ինձ սիւն լուսոյ, ի կեանս յաւիտենից[21]:

Ռուսուգանը թաղված է Հաղբատի վանքի մեծ գավթում, Կյուրիկյան տոհմի տապանատանը[22]:

ԲԱՎՐԻՆԱ

Բավրինան Կյուրիկե Գ թագավորի դուստրն է: Բավրինան մյուս քույրերի՝ Մարիամի և Ռուսուգանի հետ 1181 թվականին մասնակցել է Սանահնի վանքի Ամենափրկչի ժամատան կառուցմանը և իր հիշատակին կանգնեցրել է գավթի կենտրոնական չորս սյուներից հարավ-արևելյանը, որի վրա արձանագրել է.

Ես՝ Բաւրինա, նոյն արքայի (իմա Կյուրիկե Գ) դուստր, քոյր Մարիամու, կանգնեցի զսիւնս զա(յ)ս և զիս յիշեցէք ի Ք(րիստո)ս[23]:

Բավրինան թաղված է Հաղբատի վանքի մեծ գավթում, Կյուրիկյան տոհմի տապանատանը:

ՌՈՒՍՈՒԳԱՆ

Կյուրիկե Գ թագավորի կնոջ՝ Թամարի հորաքույրն է: Ռուսուգանը քրոջ աղջիկների՝ Մարիամի, Բավրինայի, Ռուսուգանի հետ 1181 թվականին մասնակցել է Սանահնի վանքի Ամենափրկչի ժամատան կառուցմանը և իր հիշատակին հարավ-արևմտյան սյան վրա արձանագրել է.

Ես՝ Ռուսուգան, հաւրաքոր Թամարի, մայր թագուհեացդ զսիւնս կանգնեցաք, զմեզ յիշեցէք ՝ի Ք(րիստո)ս[24]:

ՄԱՐԻԱՄ

Մարիամ Բագրատունին Կյուրիկե Գ թագավորի դուստրն է: Մարիամը 1181 թվականին մասնակցել է Սանահնի վանքի Ամենափրկչի ժամատան կառուցմանը և իր հիշատակին կանգնեցրել է գավթի կենտրոնական չորս սյուներից հյուսիս-արևելյանը, որի վրա արձանագրել է.

Ես՝ Մարիամ Բագրատունի, դուստր արքային Կիրիկի, մեծաւ յուսով կանգնեցի

[18] Ստեփանոս Սիւնեաց եպիս., նույնը, էջ 236—237:

[19] Դիվան հայ վիմագրության, պ. II, էջ 138:

[20] «Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 127:

[21] Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 115:

[22] Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 183:

[23] Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 114:

[24] Կ. Ղաֆադարյան, նույնը, էջ 115:

զսիւնս զայս և ետու զիմ հայրենի ս(ուր)ք նշանս մեծածախ պահարանով ի ս(ուր)ք Ա(ստուա)ծածինս, սկեան արծաթի, եւ տաւնացուցակ[25]:

Մարիամի հրամանով 1185 թվականին Հաղբատի մեծ ժամատանը կից կառուցվել է փոքրագույն գավիթը կամ Կյուրիկյան տոհմի տապանատունը[26]:

Մինչև փոքրագույն գավթի կառուցումը այնտեղ թաղվել են Մարիամի հորաքույրը՝ Ռուսուդանը, և մայրը՝ Թամար թագուհին: Մարիամ արքայադուստրն իր կառուցած տապանատունը արձանագրության մեջ անվանել է «տուն աղոթից», թեև հնում այդպես էին կոչվում միայն եկեղեցիները: Հետագայում վանքի առաջնորդ Հովհաննես Խաչենցին (հիշվում է 1209—1221 թվականներին) մասամբ քանդել է մարիամաշեն փոքրագույն գավիթը և նրա վրա կառուցել է այժմ գոյություն ունեցող մեծ գավիթը, որ Հաղբատի ամենանշանավոր կառուցվածքն է: Այս մասին Կ. Գանձակեցին գրել է. «Սա (Յոհաննէս Խաչենցին) քակեաց զգաւիթն փոքրագոյն, որ ի դուռն կաթուղիկէին Հաղբատայ, և շինեաց մեծ և գեղեցիկ շինուած, որ զարմացուցանէ զտեսողսն հիացմամբ»[27]:

Մարիամը 1200 թվականին Հաղբատի մեծ գավթի մարիամաշեն կամարի վրա փորագրած արձանագրությամբ հայտնում է, որ քրոջ՝ Ռուսուդանի հետ միաբանել է սուրբ Նշանին և «շինեցի եւ զգաւիթս, ծածկեցի, եւ զիմ ս(ուր)քն, մեծածախ պահար(անաւ)... Ավետարան ի ս(ուր)ք Նշանս էտու...»:

1212 թվականին նախորդ արձանագրության տակ ավելացրած Մարիամի նոր արձանագրությունից պարզվում է, որ մահացել ու փոքրագույն գավթում թաղվել են հայրը, մայրը, քույրերը՝ Ռուսուդանը, Բավրինան, եղբայրը՝ Աբասը:

Մարիամ Բագրատունու շինարարական ամենաաչքի ընկնող կառույցը Քոբայրի վանքի կաթողիկե եկեղեցին է: Այս եկեղեցին Մարիամը կառուցել է ծնողների և եղբոր՝ Աբասի անունով (Աբաս թագավորը մեռել է 1192 թվականին, երբ դեռ 19 տարեկան էր: Մարիամաշեն կաթողիկեն հավանաբար կառուցվել է Աբասի մահից առաջ): Պատմիչ Մխիթար Այրիվանեցին հաղորդում է, որ Մարիամը Քոբայրի վանքում կրոնավորուհի էր[28]:

Մարիամը թաղված է Հաղբատի վանքի մեծ գավթում, Կյուրիկյան տոհմի տապանատանը:

(Շարունակելի)

---

25 Կ. Ղաֆադարյան, նույնը, էջ 114:

26 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 157—158:

27 Կիրակոսի Գանձակեցւոյ Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ՝ 98:

28 «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն հայոց», Մոսկվա, 1860, էջ 78: